

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար իսկգաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար , թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոց վարի գրանը կից Նոր Գրատունը :

### Ա.Ձ.Գ.Ա.Յ.Ի.Ն

Հիւանդանոցի առժ. Հոգաբարձութեան կողմանէ հետեւեալ հրատարակիրը կգրկուի առ մեծարդոյ աղջայինս :

« Ս. Փրկչի Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը պատիւ կհամարի հրաւիրելը Պատուական Աղջայինս ի հանդէս Համբարձման տարեդարձի, որ ունի կատարի ի հինգշաբթի աւուր 29 մայիսի յԱղջային Հիւանդանոցն, ուր Ամենապատիւ Տեղապահ Սրբազան Հայրը Ս. Պատարագ պիտի մատուցանէ, եւ հանդէսը շքեղութեամբ պիտի կատարուի : Յուսով է հոգաբարձութիւնը որ բարեւէր Աղջայինք կը հաճին իրենց այցելութեամբը պատուել ազգասիրաբար Հիւանդանոցի յարկը » :

Կյուսամբ թէ ամեն գլխաւոր ազգայինք այս հրաւիրանաց համեմատ առաջիկայ հինգշաբթի օր աղջային Հիւանդանոց երթալով, հոն գտնուող պատուաբերեալ ազգայինքն կմխիթարեն :

— Ամեն Տեղապահ Հօր հրաւիրմանը, մայրաքաղաքս գտնուող գերեւորակապտունք վաղը երկրորդ անգամ Պատրիարքարան պիտի ժողովուին, արդէն ծանօթ եղող կրօնական

ինչոց համար վերջին որոշում միտալու նարատակալ :

— Աղաբէգեան Մարկոս Էֆէնտին որ կառավարութեան կողմանէ պաշտօնով մը ժամանակէ մ'ի վեր բացակայ կղանուէր մայրաքաղաքէս, կիրակի օրը դարձալ :

— Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոցն Տ. Յովհաննէս քահանայն, կիրակի առաւօտ Ս. Պատարագ մատուցանելէն յետոյ, ժամը ութնին անոնները յանկարծամահ վախճանելէ, վախճուն տարեկան հասակին մէջ :

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պօլոց միւթէսարըֆ անուանեցալ Ծերիգ Հաֆրդ փաշա :

— Ոստիկանութեան պաշտօնատուն առաջին ժողովին նախագահ կարդեցալ Սպիտ փաշա, առաջին տասնճանի առաջին կարդի պաշտօնատարութեամբ :

— Պօլոց ոստիկանաց վերադասու թիւնը (զսարթա միտիւրիդի) Պէնդալիի նախորդ միւթէսարըֆ Հասան փաշային յանձնուեցալ :

— Պէյօղլուի միւթէսարըֆ ան

ուանեցաւ Յիւրբի էֆէնտի, առաջին աստիճանի երկրորդ կարգի պաշտօնատարութեամբ ։

—Պօլոյ միւթէսարըֆի օգնական կարգեցաւ հաճի Հիւանի էֆէնտի, երկրորդ աստիճանի առաջին կարգի միւթէմայիզի պաշտօնատարութեամբ ։

—Իւսկիւտարի միւթէսարըֆի օգնականութիւնը Սապիթ էֆէնտիի յանձնուեցաւ, յիշեալ աստիճանի պաշտօնատարութեամբ ։

—Պէյօղլուի միւթէսարըֆի օգնական անուանեցաւ Վասիլաքի պէյ, յիշեալ աստիճանաւ ։

—Իւսկիւտարի ոստիկանութեան ժողովին անդամ կարգեցաւ Մավրօ եւանի էֆէնտի ։

—Պավիէրայի թագաւորին դա հաժառանգ իշխանը Պէլկրատ հասնելով Միխալ իշխանին հետ տեսնուեր է անցեալ հինգշաբթի օրը Եէրկէօյու անկէց Պուքրէշ երթալէն յետոյ Ռուսճուզի համար ճամբայ ելած ըլլալով՝ կ'յուսացուի որ այսօր վաղը մայրաքաղաքս կ'հասնի ։

—Եգիպտոսի բարձր խորտիլին օրդի Հասան փաշան որ Լոնտոնի մէջ ուսման ու գիտութեան կպարապի, մօտերս պատիւ ունեցեր է թագուհւոյն հետ տեսնուելու ։

—Խոաքական դորձաւորաց անուամբ Եգիպտոսի մէջ շինուելիք հիւանդանոցին համար, բարձր խորտիլը 1500 մեթր դեռտին մը շնորհեր է ։

—Եանեայի հելլենական հիւպատոսը՝ կրետէ, և կրետէի հելլենական հիւպատոսը Իզմիր փոխադրուեր են ։

—Յունաստանի օսմանեան դեսպանը շքեղ կոչուք մը ըրեր է Սթէնքի դեսպանաց և Բիրէ դանուող պատե-

րազմական օտար նաւերու հրամանատարներուն ։

—Կրետէէն Յունաստան գաղթողներուն խիստ մեծ մասը իրենց հայրենիքը դարձած, և մէկ քանի հոգի միայն Յունաստան մնացած են ։

—Սըրպի մէջ առաջիկայ ամսոյն սկիզբէն պիտի դադրի աւստրիական թղթատարութիւնը ։

—Մօտերս Պօլոյ մաքսատան վարչութիւնը վաճառականի մը վրայ կասկած ունենալով՝ կպարտաւորի սրնտուկը բանալ աալ՝ որով շատ մը գոքեր և արծաթեղէն անօթներ երևան ելեր են ։ Այս վաճառականին մաքսատունէն փախցունելու դիտաւորութիւնը հաստատուելով, քառապատիկ մաքս վճարելու դատապարտուեր է ։

—Շէյխ Շամիլ էֆէնտիին հետք եկած են իր երկու փեսաները՝ որոնց մէկը Ռուսիոյ զօրաց մէջ պաշտօնեաց է եղեր ։ Շէյխը 80 տարեկան գեղեցիկ ծերունի մ'է, իր բարձր հասակը և ճերմակ մօրուքը պատկառելի կընեն զինքը ։

—Մօտերս գործաւոր մը ճիպալի ըսուած տեղը գործատան մը մէջ մեքենայ մը մաքրելու զբաղած ատեն՝ կաթսային մէջէն յանկարծ շոգի մը ցայտելով խեղճ մարդուն ազդրը վերէն մինչև վար այրեր է ։

—Մայրաքաղաքիս քաղաքապետական խորհուրդը զբաղած է այժմ հացագործութեան վերաբերեալ կանոնադիր մը հաստատելու համար, որուն կարևորութիւնը ասբացուցանել հարկ չէ ։

—Կհաւատեն թէ Բերայի Միւնիսիքալիթէի նորընտիր նախագահ

Պալիհ պէյը թաղային հիւանդանոց մը շինելու առաջարկութիւն մը պիտի ընէ, որուն տեղն արդէն Սէրվէր է ֆէնտին որոշած է եղեր :

—Պահճէ—քէօյի կողմերը գըտնուած պէտքերը տեսնող հաւատարիմ անձ մը կհաւաստէ թէ ջուրը հաղիւ թէ ամսուան մը համար պիտի բաւէ :

—Սամսի իշխան Միւսիւրիւս Բալլաքի պէյը անցեալ շաբաթ երեկոյ մայրաքաղաքս եկաւ :

—Ազրիանուպօլսոյ կուսակալ Ասըմ փաշան անցեալ շաբաթ օր մայրաքաղաքէս մեկնեցաւ իր պաշտօնատեղին երթալու համար :

—Անցեալ ուրբաթ օր բարձր մեծեպարքոսը Գանլըճա երթալով երկարօրէն ատութիւն մը ըրեր է Եգիպտոցի Հալիմ փաշա իշխանին հետ :

—Եգիպտոսի բարձր խրտիվը վիէննայէն մեկներ է Պէրլին երթալու համար : Նորին բարձրութիւնը վերադարձին վիէննայէն պիտի անցնի :

—Պուքէշէն եկած հեռագրի մը ըսածին նայելով՝ կարողա իշխանին եղբայր՝ Լէօբօլտ իշխանը երկուշաբթի պիտի մեկնի Գերմանիա երթալու համար Գանուրի ճամբով :

Անգղիական գրօշակով վաճառականական մեծ նաւ մը, Նոր—Չէլանտէն Անգղիա գալու համար ճամբայ ելած, գիպուածով բռնկեր է ճամբան, և մարելը անհնար ըլլալով՝ ճամբորդք ու նաւաստիք մակոյկները մտեր և ինքզինքնին աղատեր են, բայց մակոյներէն մէկը՝ որուն մէջ 30 հոգի կայ եղեր, բոլորովին անցայտ եղեր է, իսկ միւսները 7 օր գիշեր ու

ցերեկ ծովուն երեսը անպատմելի նեղութիւն կրելէն ետքը՝ անկէց անցնող շոգենաւու մը մէջ առնուեր են : Այրած շոգենաւուն մէջ, ուրիշ վաճառքէ զատ, 130 հաղար լիբայի ալ պատրաստ ստակ կայ եղեր :

—Չինաստանի Չիչվօն քաղաքին մէջ գաղղիացի երկու հումէական քահանաներ տեղւոյն կառավարչին բընակարանին մօտերը եկեղեցի մը շինենելով, եկեղեցական արարողութիւն կատարած ատեն, չինացիք հոն գըտնուող մէկ քահանային վրայ յարձակելով քիթը ականջը և ուրիշ անդամները կտրելէն յետոյ շարաշար սպաններ են : Սպանելոյն ընկեր եղող միւս քահանայն՝ որ նոյն միջոցին ներկայ է եղեր, այս դէպքն իմանալուն պէս՝ կերպարանքը փոխեր ու փախեր է :

—Գաղղիոյ կառավարութիւնը ըլլաբօրատեան կղզեաց վիճակին վրայ պաշտօնական տեղեկագիր մ'ուղեր է, նոյն կողմերը գտնուող գաղղիական նաւատորմին հրամանատարէն :

—Փարիզի մէջ, Արաբերէն՝ Տաճկերէն՝ Յոյն և Հայ ընդունելով մօտերըս լրագիր մը պիտի հրատարակուի եղեր, խիստ օգտակար նիւթերու վրայ խօսելու պայմանաւ :

—Սըրպի երեսփոխանաց Ժողովն անցեալ չորեքշաբթի օրը բացուեր է : Բոլոր անդամոց թիւը՝ 316 է եղեր :

—Անգղիոյ կառավարութիւնը, Չինաստանի վերաբերեալ պաշտօնական գրութիւնները մօտերս պիտի հրատարակէ :

—Անգղիոյ կառավարութիւնը առաջարկեր է Հռոմսոյ Պապին, որ իր լաւտա գտնուող հումէական քահանայից պատուիրէ եկեղեցեաց մէջ խը

բասել իրենց ժողովուրդը, որպէս զի ետ կենան բողոքականաց հետ կուտելէ և իրլանտիոյ մէջ այս պատճառաւ յաճախ ծագած կռիւներն ու սպանութիւնք վերջանան :

—Փարիզի երևելի բժիշկներէն Պ. Կելաթօն Բեդերպուրի պիտի կանչուի եղեր, Ռուսաց Աղեկասեղ-ը կայսրը գարմանելու, որ՝ ինչպէս յայտնի է՝ հիւանդ պառկած է :

—Ռուս քաղաք գրածին նայելով, ժողովրդեան խնդրոյն կատարութիւնը որոշեր է որ գալ ասրի Բեդերպուրի մէջ մանիֆատութիւն արուեստահանդէս մը բացուի :

—Գաղղիոյ մէջ Բէյն գետին կողմը վաճառականին մէկը՝ այն տեղերը կշարիէ կձևէ և կգծէ եղեր : Այս գործը կատարութեան հետաքրքրութիւնը շարժելով, կրօնէ վաճառականը և ընտութեան կառնէ : Այսպէս կիմացուի որ վաճառական ձևացողը Բրուսից զինուորական հրամանատարներէն մէկն է, և թէ՛ այս գործը թըշնամութեան մը համար չէ, այլ՝ փորձառութեան համար կընէ : Այսու ամենայնիւ կատարութեան ազէկ չերենալով, անմիջապէս Գաղղիոյ երկրէն դուրս հանուեր է :

—Ռուսիոյ տերութեան միջին Ասիոյ մէջ ազգեցութիւն աւելցունելը՝ Անգղիոյ կառավարութեան ուշագրութիւնը գրաւած լլլալով, Հնդկաստանի կատարութիւնը յատկապէս նոր դրասիներակ մը սահմաներ է միջին Ասիոյ ինգրոյն վերաբերեալ որ և է հրատարակական դրուած թարգմանելու համար : Այս նոր դրասիներակին համար տարեկան 12500 Ֆրանկ ձեւեր որոշուեր է :

—Մածծինի յայտարարութեամբ մը Միլանի ոստիկանութեան վարչութիւնը ամբաստանելով, հաստատուեր է թէ այս քաղաքին մէջ պատահած խուլութեանց հեղինակը նոյն ինքն ոստիկանութիւնն է :

—Տանիմարգայի գահաժառանգ իշխանին՝ Շուէաի և Նորվեկիոյ Լուդովիկոս իշխանուհւոյն հետ ըլլալիք ամուսնութեան հանդէսը, առաջիկայ յուլիս ամսոյն Չիլի պիտի կատարուի :

—Չինաստանի դեսպանը այս ամսուան մէջ Փարիզէն պիտի մեկնի հետք հետէ Պէրլին, Ռուսիա, Շուէա, Նորվեկիա, Տանիմարգա, Հոլանտա, Պելճիզա և իտալիա երթալու համար :

ԽՆՊԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՍՅՈՑ

Պետրպուրի Միանասրեանց տարանէն հռչակաւոր Անգղիացի բժիշկ ԿՈՄԲԻ այս աշխատութիւնը հայերէնի թարգմանուած ի լոյս ընծայուցաւ, աշխատութիւն մը որ բոլոր երախայ ունեցողներուն ամենամեծ դիւրութիւն մը կուտայ իրենց դաւախող անողջպահական ինամասարութեան եղանակին մասին :

Այս աշխատութիւնը նշանաւոր է նաև իր յաւելումներովը, որոյ էն առաջին տեղը բռնած է ազգային թեմբու թէ էդ անուանց ցանկը :

Կը ծախուի Պ. Յ. Մարգարեան և ընկ. գրատունները ի Քիւրքճէ-խան, Զաղմաղճըլար և Մերճան : Գին 5 Փր :

ՏՆՕՐԷՆ ՆՈՍԵՐՆ  
Հ. Յ. ԱՆԱՃԱՃՆ  
ՔՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒ Յ. ԲԻՐՔՁԵՆ